# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

## Հ Ր Ա Մ Ա Ն

«01» հոկտեմբերի 2025 թ. N 158-Լ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացված «ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ» անհատ ձեռնարկատիրոջ և «ԷԼԱ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2025 թվականի սեպտեմբերի 18-ի դիմումները

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով «ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ» անհատ ձեռնարկատիրոջ քաղաքաշինության բնագավառի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն» 1-ին դասի լիցենզիայի (ՔՊԼ-002191) «Ջրամատակարարում և ջրահեռացում» (ՔՊՆ-002191-08) ենթատեսակի ներդիրի և «Շինարարության որակի տեխնիկական հսկողություն» 2-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-001091) «Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ» (ՔՊՆ-001091-04) ենթատեսակի ներդիրի գործողությունը:

2. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով «ԷԼԱ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառի «Շինարարության իրականացում» 2-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-000890) «Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ» (ՔՊՆ-000890-04) ու «Ջրամատակարարում և ջրահեռացում» (ՔՊՆ-000890-08) ենթատեսակների ներդիրների և 3-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-002050) «Էլեկտրամատակարարում» (ՔՊՆ-002050-05) ու «Տրանսպորտային ուղիներ» (ՔՊՆ-002050-09) ենթատեսակների ներդիրների գործողությունը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10/1/2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ